

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Ծնած Վախարազատ 29 ֆ 1864 — մեռած Երևան 29 Ը 1929).

Մեռաւ Յովհ. Յովհաննէսեան: Նահապետական ջնարին անըդուելի հոգին: Հայրենի աւանդութիւններուն ջերմանող հաւատացեալը: Ծնած գիւղական խաղաղ յարկին տակ, բայց երկնքի հմայքով լեցուած, ապրեցաւ պարզ, սիրեց լուրջ բնութիւնը իր ամբողջ անարուեստ գեղեցկութեամբ: Եւ այդ բնութեան մէջ ցոլացուց իր հոգւոյն անդրադարձումները: Կարծես հայրենի լեռներն ու դաշտերը զգեցած են այնտեղ մի թեթև ոսկեթել ծիրանի վտակները կը կարկաչեն աւելի ներդաշնակ: Նորէն կը լսենք Բլբուլի և Վարդի սիրոյ վէպը թարմացած և ձևաւորուած ջան միջնադարեան աշուղներունը: Յովհաննէսեան՝ միջնադարեան չունգուրին նոր շունչ մը տալու սեռած իտէալն ունեցաւ:

«Ա՛ռ չունգուրը, ամբ լարերիմ կըրակ վառիր մեր սրտում,
Մեզ ամէնիս Սոր շունչ տուող մի բամ ասա սրտալի»:

Իր ստացած բարձրագոյն ուսումները թէ էջմիածնի մէջ և թէ Մոսկուայի համալսարանը, չկարողացան փոփոխել հոգւոյն խորքը: Որով Յովհաննէսեան մնաց աշուղային-աւանդական երգիչ, և այս եղաւ զինքը բնորոշող գլխաւոր դրոշմը: Բարձրագոյն ուսումը լեզու, և արուեստ տուաւ, բայց ջնարն հնչեցնողն եղաւ նոյն ինքն Յովհաննէսեանի հոգիէն բխած բզ-զացումները:

Դպրոցական նեղ շրջանակը, իրատ քաշուած կաղապար մը տուաւ բանաստեղծին, նա չունեցաւ հոգեկան ազատութիւն և հորիզոնի անասձմանութիւն: Մնաց անցող շրջանի տիպար տարազին մէջ և հոգւով և հայեացքներով: Իր ուսուցիչը Սմբ. Շահազիզ, հակառակ որ այդ դարուն փնտռուած բանաստեղծ մ'էր, բայց անկարող եղաւ այդ աշակերտին մէջ թա-

փանցել իր քարոզչական շեշտը և ոչ Պատկանեանի հայրենաշունչ քարոզները արծազանգ գտան արդէն իր խորքով բռնութենէն ներշնչուած Յովհաննէսեանին մէջ:

Յովհաննէսեան՝ առաւելապէս հրահարուեցաւ հայրենիքի սարբերէն, կրօնական շունչով և զազափարով համակուած, ապրեցաւ այդ մարդը մթնոլորտին մէջ, խորհեցաւ, ներշնչուեցաւ, բայց չերգեց զուտ հայրենասիրական մտիւններ, այլ քաղեց հայրենի երկնքէն համաշխարհի հարցեր ջննեց ու լուծեց, դժբախտաբար առանց խորհրդապաշտութեան, առանց իմաստասիրութեան, այլ մակերեսային, և շատ անգամ ալ տղայական ու երկարաբան վերաբերմունքով:

Եթէ նա երգեց ջանի մը ազգային տողեր, ատոնք տօնական հանդէսներու համար էին և այդպիսիները շատ ճապաղ, շատ անյաշող էջեր կը կազմեն: Օրինակ Վարդանանց օրը, Նոր տարի և այլն: Ուրեմն՝ Յովհաննէսեան եղաւ ենթակայական երգիչ մը, անհատական սէրը և բնութիւնը նկարող:

Այսպէս նա հարազատ զպատկիչն էր միջնադարեան երգիչներու հոգեբանութեան, աւելի արդիացած, աւելի արուեստական շեշտով: Նա արևելահայ բանաստեղծութեան ուսման կարող է համարուիլ այնու որ եկող սերունդին ցոյց տուաւ հայրենի և հայ սրտէն բխած բանաստեղծութեան հարազատ ու վճիռ աղբիւրը: Անա թուամանեանի և Իսահակեանի և զրեթէ առհասարակ եկող ուսահայ երգիչների առջև բացաւ անսահման գեղեցիկ դաշտ մը ուր կարող էին գտնել սիրոյ հարազատ արտայայտութիւնը հայ միջնադարեան խորհրդապաշտ պարկեշտութեամբ: Հոս է Յովհաննէսեանի մեծագոյն և անժխտելի արժանիքը որ զինքը պիտի անմահացնէ մեր մատենագրութեան մէջ:

Յովհաննէսեան ինքնին եզական տա-
 դանդ մը չէ. կարող ենք ըսել որ նա միջակ
 գրող մ'էր, շատ հազուադիւս են իր մէջ
 գիտաւոր տողեր, պատկերալից զգացում,
 ներ, խանդի թռիչներ: Բանաստեղծին շը-
 նորհքն ընդհանրապէս կը կայանայ իր
 մաքուր և ընտանի լեզուին մէջ, իր գա-
 դափարներու չափաւորուած արտայայտու-

Հակառակ որ բանաստեղծին քնարը
 տկար է և շատ անհաւասար՝ սակայն կը-
 ընելով ժողովրդային բնոյթ, հնչեցնելով
 հայրենի աշուղներուն հարազատ շնչով,
 Յովհաննէսեան զեռ կ'ապրի մեր մէջ: Մա-
 նօթ են մեր Երգարաններուն մէջ «Արագն
 էկաւ լափին տալով» «Ալագեազ բարձր
 սարին» ոչ որպէս գեղեցկագոյն կտոր-



Յովհաննէսեան Յովհաննէսեան

մին մէջ: Այս ամէնէն վերջ Յովհաննէ-
 սեան ազդեցութիւններ ալ կրած է Հայ
 և օտար՝ իրմէ յաջողագոյն տաղանդնե-
 րէն, մանաւանդ ուսական հոգին, Լիւր-
 մենտովի և Նաղառնի քնարով այնտեղ
 երանգներ ունի, որոնց չափազանց մօտէն
 ծանօթ էր, նոյնպէս Հայնէի և կէօթէի,
 որոնցմէ թարգմանութիւններ ալ ըրած է.
 Ինչպէս Պատկանեանի և Նալբանդեանի:
 Սակայն պէտք է ըսել որ յաջողեր է բա-
 ւական խտացնել, և ոչ ստրուկ հետեոյ
 մ'ըլլալ:

Ներ այլ աշուղային տաքուկ մօրիւներ:
 Յովհաննէսեան երբ կը մեռնէր արդէն
 վաղուց վերջացուցած էր իր ասպարէզը,
 քաշուած առանձնական և խիստ մեկու-
 սացած կեանքի մը, չեմ գիտեր համակիր
 թէ համակամ աչքով կը հետեւէր հայրե-
 նիքին ներկայ անցուղարձերուն, Սակայն
 ջերմ հաւատացեալ հայ կրօնին, հայ ազ-
 գին, սիրեց այն հողը ուսկից ծնած էր և
 վերստին խառնուեցաւ նոյն հողին հետ:

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ